

Ն Ա Ի Ա Ս Ա Ր Գ

ՄԱՐԶԱԿԱՆ ՅԱԻԵԼՈՒԱԾ

ԱԶԳԻԱԿ

Բ. ՏԱՐԻ

Թի 4 (16)

ՆՈՅԵՄԲԵՐ 2003

ՎԵՐԻՎԱՅՐՈՒՄՆԵՐ

(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՂԶԿԱՆՑ ԿԱԶՄԻՆ ԶԱՏՐԱԿԻ ԵՒՐՈՊԱՅԻ ԱԽՈՅԵԱՆ ՀԱՆԴԻՍԱՆԱԼՈՒՆ ԱՌԻԹՈՎ)

Անկասկած պատմական աննախընթաց իրագործում մըն է ճատրակի Հայաստանի աղջկանց հաւաքականի Եւրոպայի ախոյեան հանդիսանալը: Հայրենի ճատրակը հարուստ է նուաճումներով, սակայն անցնող տասնամեակներուն արձանագրուած միջազգային մակարդակի յաղթանակներուն առիծի բաժինը վերապահուած է տղոց, իսկ աղջիկները միշտ ալ մնացած են տղոց շուքին տակ, իրենց արձանագրած ոչ-համոզիչ կամ միջակ արդիւնքներուն պատճառով:

Սակայն ճատրակի վարպետութիւններու նոր սերունդ մը, գլխաւորութեամբ մեծ վարպետ Լիլիթ Մկրտչեանի, այսօր եկած են եւ շրջած՝ չափանիշները, լուսարձակները հրաւիրելով իրենց վրայ:

Սակայն հայկական ճատրակի այս յաջողութեան առթած ուրախութիւնը ամբողջական չեղաւ, որովհետեւ անցնող ամիսներուն երկու լուրջ հարցեր փոթորկեցին հայրենի մարզական եւ յատկապէս ճատրակի շրջանակները:

Առաջինը՝ ճատրակի Եւրոպայի ախոյեանութեան մեր տղոց հաւաքականին չմասնակցիլն էր: Բոլոր դասաւորումները կատարուած էին, տոմսերը՝ գնուած, սակայն տղոց կազմը մետասաներորդ պահուն մերժեց ճամբորդել: Պաշտօնական բացատրութիւններ չտրուեցան, սակայն շշուկներ կային, թէ հարցը նիթականի առնչուած է: Յամենայնդէպս, նման երեւոյթներ անընդունելի են հայրենի մարզաշխարհին, յատկապէս ճատրակի բնագաւառին մէջ, տրուած ըլլալով, որ անոնք միշտ ալ արժանաւորապէս կը պարգեւատրուին եւ կը ստանան նիթական համեմատաբար «նախանձելի» յատկացումներ:

Երկրորդ «խայտառակութիւն»ը Լեւոն Արոնեանի Գերմանիա հաստատիլն ու անոր դրօշին տակ մրցաշարքերու ներկայանալու որոշումն էր: Արոնեան բազմիցս հանդիսացած է աշխարհի կրտսերներու ախոյեան եւ երկու անգամ՝ Հայաստանի տղոց ախոյեան: Երիտասարդ ճատրակի վարպետին հաշուոյն անցեալ տարի մեծ անարդարութիւն մը կատարուեցաւ, երբ անոր իրաւունք չտրուեցաւ Հայաստանի տղոց կազմէն խաղալու ճատրակի Ողիմպիականին, հակառակ որ Արոնեան հանդիսացած էր Հայաստանի ախոյեան: Նախընտրութիւն տրուեցաւ փոխ ախոյեան Գաբրիէլ Սարգիսեանի, հակառակ ֆետերասիոնի ցանկութեան, որովհետեւ Հայաստանի հաւաքականի վերջեան անդամները այդպէս ցանկացած էին...:

Արոնեանէն առաջ Հայաստան 1996ին կորսնցուցած էր նաեւ Սերգէյ Մովսէսեանը, նոյնպէս անարդար եւ կողմնակալ որոշումներու հետեւանքով:

Մովսէսեան այսօր միջազգային անուն է եւ կը գլխաւորէ Սլովաքիոյ կազմը: Ան մնայուն ներկայութիւն է միջազգային դասաւորման բարձրագոյն դիրքերուն վրայ:

Արոնեան վերջերս Գերմանիան ներկայացուց տարուան ամէնէն զօրաւոր մրցաշարքերէն մէկուն եւ գրաւեց 2րդ - 3րդ դիրքերը, ի միջի այլոց պարտութեան մատնելով նաեւ աշխարհի նախկին ախոյեան Քարփովը...:

«Հին»երուն պատճառով կը հեռացուին նորերը. նման պայմաններու մէջ նախանձելի չէ Հայաստանի ճատրակի ապագան: Եթէ պարզ բաղդատական մը ընենք օրինակ Ազրպէյճանի տղոց հաւաքականին հետ, յստակ կը դառնայ, որ իբրեւ միջին տարիք 17 ունեցող այդ կազմը, որ արդէն իր մասին մեղան կը հոսեցնէ ճատրակի աշխարհին մէջ, քանի մը տարիէն կրնայ դառնալ Եւրոպայի հզօրագոյն կազմը, մինչ նախապէս Եւրոպայի տղոց ախոյեան հանդիսացած Հայաստանի կազմը իր երիտասարդ եւ հզօրագոյն տարրերը կը կորսնցնէ...:

ՃԱՏՐԱԿԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՂԶԿԱՆՑ ԿԱԶՄԵ՝ ԵՒՐՈՊԱՅԻ ԱԽՈՅԵԱՆ



ՊԵՅՐՈՒԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԱԹՈՆԸ ՊՍԱԿՈՒԵՅԱԻ ՄԵԾ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ



Հ.Ա.Ը.Մ. ԱՆԹՈՒՆԵԱՊ ՊԵՅՐԵԹԻ ԳՊՐԱՅՆԵՐՈՒ ԱՇԽՈՅԾ ԳՈՐԾՈՒՆԵՐԹԻՆ



ملحق أزياءك

ՊԵՅՐՈՒԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԱԹՈՆԸ ՊՍԱԿՈՒԵՑԱԻ ՄԵԾ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ

Կիրակի, 19 Հոկտեմբեր 2003ին, իր տեսակին մեջ առաջին անգամ ըլլալով Լիբանանի մեջ կը կայանար Պեյրուի միջազգային մարաթոնը, որուն իրենց մասնակցութիւնը կը բերէին լիբանանցի մարզիկներու կողքին, աշխարհի տարբեր երկիրներէ ժամանած մարզիկներ: Պեյրուի միջազգային մարաթոնին իրենց մասնակցութիւնը բերին աւելի քան 6000 երկսեռ մարզիկներ:

Անակնկալօրէն մրցադաշտ ժամանելով, հանրապետութեան նախագահ զօր. Էմիլ Լահուտ տուաւ մարաթոնին ազդանշանը: Պետական անձնատրութիւններէն ներկայ էին խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիի ներկայացուցիչ երեսփոխան Ատնան Արաբժի, վարչապետ Ռաֆիք Հարիրիի ներկայացուցիչ երեսփոխան Միշել Ֆարաճ, երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան, ՄԱԿի ընդ. քարտուղար Քոֆի Անանի անձնական ներկայացուցիչ Տը Միսթուրա (որ ի դէպ իր մասնակցութիւնը բերաւ նաեւ մարաթոնին), արաբական երկիրներու դեսպաններ եւ հիւպատոսներ, ինչպէս նաեւ մեծ թիով համակիրներ:

Մարաթոնը կ'ընդգրկէր զանազան մրցանակներ. մարաթոն՝ 42,195 քմ. 10 քմ. 4 քմ. (տարիքային բաժանումներով): Մրցումին իրենց մասնակցութիւնը կը բերէին նաեւ հաշմանդամներ, իրենց յատուկ կառքերով:

Մրցումին ընդհանրապէս տիրապետեցին «սեւ ցամաքամաս»ի մարզիկները, գլխաւորաբար քենիացիք:

Ստորեւ՝ արդիւնքները.

42,195 քմ.

Տղաք

1.- Փօլ Ռուկոթ (Քենիա) 2 ժամ 17' 24"



- 2.- Ծէյմս Քազանճա (Եթովպիա) 2 ժամ 17' 36"
- 3.- Վիքարօ Ծեթօ (Եթովպիա) 2 ժամ 17' 43"

Աղջիկներ

- 1.- Ժաքլին Թորրի (Քենիա) 2 ժամ 42' 12"
- 2.- Միուլինա Օրիքա (Լեհաստան) 2 ժամ 42' 29"
- 3.- Անիվիզա Քոսաչիքա (Ռուսիա) 2 ժամ 45' 14"

Լիբանանցի մարզիկներ
Տղաք

- 1.- Ալի Աուատ 2 ժամ 44' 14"
- 2.- Միհտի Շըպլի 2 ժամ 44' 37"
- 3.- Հիսէյն Աուատա 2 ժամ 47' 03"

Աղջիկներ

- 1.- Մարի Պըժժանի 3 ժամ 34' 53"
- 2.- Սուրայա Ալ Սոֆի 3 ժամ 45' 40"
- 3.- Ռիթա Մաալուֆ 3 ժամ 46' 00"

10 քմ.

Տղաք

- 1.- Խտըր Ապո 32' 19"
- 2.- Ժաք Տիպ 32' 40"
- 3.- Իպրահիմ Ալ Իթանի 33' 02"

Աղջիկներ


- 1.- Լույնա Ֆըրտաուն 36' 40"
- 2.- Վիրա Նաքուզի 38' 48"
- 3.- Ֆարահ Մանսուր 40' 01"

Միւսի մարաթոն
Տղաք

- 4 քմ. (11 - 12 տարեկան)
- 1.- Մոհամէտ Խատրա 18' 12"
- 2.- Ժոզէֆ Նաքուզի 18' 18"
- 3.- Ահմատ Լատրանի 18' 21"



Հ.Մ.Ը.Մ.ական Արին Գասապեան (11 տարեկան) մինչեւ 13 տարեկան փոքրերու 4000 մետր վազքի մրցումին հանդիսացաւ 4րդ:



1974ին 10 քիլոմետր վազքի Լիբանանի ախոյեան եւ մրցանակակիր հանդիսացած էր Է. Լեւոն Թաջճեան իր մասնակցութիւնը բերաւ Հ.Մ.Ը.Մ.ի անունով եւ աւարտեց Մարաթոնի 42 քմ. մրցումը:

ԳԵՐՄԱՆԻԱ ՇԱՀԵՑԱԻ ԱՂՋԿԱՆՑ ՄՈՆՏԻԱԼԸ



2003ի աղջկանց Մոնտիալը վերջ գտաւ Գերմանիոյ յաղթանակով, որ աւարտականին 2 - 1 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Շուէտը, առաջին անգամ ըլլալով իր պատմութեան մէջ տիրացաւ այդ տիտղոսին:

Գերմանիա իր այս յաղթանակը կերտեց շնորհիւ՝ Նիա Քուէնզերի «Կոլտըն» կոլին, որ նշանակուեցաւ երկարաձգման ընթացքին (98րդ): 41րդ վայրկեանին Շուէտ 1 - 0 արդիւնքով յառաջացաւ, շնորհիւ՝ Հաննա Լիունկպերկի նշանակած կոլին (41րդ): Բ. կիսախաղին առաջին վայրկեանին սակայն, Մերըն Մայներթը նշանակեց Գերմանիոյ հաւասարութեան կոլը:

Բաժակին տիրանալէ բացի, Գերմանիա շահեցաւ այլ տիտղոսներ ալ: Պրիճիթ Փրինց շահեցաւ ոսկեայ գնդակը, իբրեւ մրցաշարքին ամենէն արժեքաւոր մարզիկը, մինչ անոր խմբակից, բերդապահ՝ Սիլքը Ռոթենպըրկ, տիրացաւ լաւագոյն բերդապահի տիտղոսին:

Երրորդ դիրքի մրցումին, մրցաշարքը հիւրընկալող երկիրը՝ Միացեալ Նահանգներ 3 - 1 արդիւնքով պարտութեան մատնեցին Քանատան, շնորհիւ՝ Քրիսթին Լիլիի (22րդ), Շէնըն Պոքսի (51րդ) եւ Թիֆընի Միլպրէթի (80րդ) նշանակած կոլերուն: Քանատայի կոլը նշանակեց Քրիսթին Սինքլէր (38րդ):

ՊԵՅՐՈՒԹԻ ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ՄԱՐԱԹՈՆԸ...

Շարունակուած՝ 2րդ էջէն

13 - 14 տարեկան

- 1.- Ալի Օսման 15' 10"
- 2.- Հիւսէյն Մաթար 15' 44"
- 3.- Ալի Ռաատ 16' 19"

15 - 17 տարեկան

- 1.- Ալեքսանտր Պլանքո 11' 04"
- 2.- Մարք Քէյրուոյ 14' 16"
- 3.- Հիւսէյն Օպէյտ 14' 57"

Աղջիկներ

11 - 12 տարեկան

- 1.- Լարա Ալմաուլա 18' 37"
- 2.- Ռոան Պարշուշ 19' 13"
- 3.- Սարա Աուալի 19' 42"

13 - 14 տարեկան

- 1.- Տատ Հըժար 20' 15"
- 2.- Սուհէյլա Շալհուպ 20' 42"
- 3.- Տանա Ալքիուա 21' 23"

15 - 17 տարեկան

- 1.- Քլոտիա Մըսլէմ 18' 04"
- 2.- Պասիմա Ռըտա 18' 23"
- 3.- Սահար Խալիլ 19' 02"

«Քաջ» դասակարգ

- 1.- Ռիմա Մընքարա 46' 26"
- 2.- Ֆարահ Մընքարա 46' 27"

Հաշմանդամներու 10 քմ.

- 1.- Մուսթաֆա Խէյրըտտին 50' 28"
- 2.- Անուար Աուատ 53' 28"
- 3.- Եուսէֆ Ալմուլա 55' 20"

Հաշմանդամներ

- 1.- Քիրսթոֆ Ացելսուվըր (Աւստրիա) 1 ժամ 45' 38"
- 2.- Էտուար Մաալուֆ (Լիբանան) 1 ժամ 57' 19"
- 3.- Օմար Ֆաուալ (Լիբանան) 2 ժամ 24' 45"

Հ.Մ.Ը.Մ. ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՐԶԱԿԱՆ ԴՊՐՈՅՆԵՐԸ ԱՐԴԷՆ ԻՍԿ ՄԿՍԱԾ ԵՆ ԼՈՒՐՉ ՓՈՐՉԵՐՈՒ, ՅՈՅՍ ՆԵՐՇՆՉԵԼՈՎ ԱՊԱԳԱՅԻ ՀԱՇՈՒՈՅՆ



Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի մարզական դպրոցները արդեն սկսած են կանոնաւոր եւ հերթական փորձերուն: Պասքեթպոլի, ճատրակի եւ ֆութպոլի խումբերը՝ գլխաւորութեամբ կարող եւ փորձառու մարզիչներու, մասնաճիւղի նոր վարչութեան հետեւողական աշխատանքին շնորհիւ ստացած են կազմակերպ եւ արհեստավարժ բնոյթ, մեծ յոյսեր ներշնչելով ապագայի հաշուոյն:

«Նաւասարդ» շահեկան հանդիպում մը ունեցաւ մասնաճիւղի վարչական եղբայրներուն եւ պասքեթպոլի կրտսեր տղոց եւ աղջկանց խումբերու մարզիչներ Վարդուկ Մարգարեանի, Հրայր Տիշչէքէնեանի եւ Ներսէս Էմմիեանի հետ, որոնք ներկայացուցին պասքեթպոլի

դպրոցներու գործունէութիւնը:

«Նաւասարդ» յաջորդիւ կ'անդրադառնայ նաեւ աղջկանց Ա. դասակարգի մրցումներուն ելոյթ ունեցող Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի խումբին, ինչպէս նաեւ ճատրակի եւ ֆութպոլի դպրոցներու գործունէութեան:

ՓՈՔՐԵՐ

Գլխաւորութեամբ մարզիչ Վարդուկ Մարգարեանի, 6-7 տարեկանէն մինչեւ 12 տարեկան փոքրերը առիթը կ'ունենան հետեւելու պաս-





քերպուլի փորձերու: Այսպէս, 1992-էն մինչեւ 1997ի ծնունդ փորքեր, բաժնուած՝ 92-93, 94-95 եւ 96 եւ վեր տարիքային դասակարգերու, կը հետեւին մինի պասքէթի փորձերու (աւելի փոքր գնդակ, աւելի ցած փահիտ): 1990-91ի ծնունդները արդէն կը սկսին հետեւիլ մեծ դաշտի վրայ պասքէթի փորձերու: Բոյր Վարդուկ Մարգարեան խանդավառութեամբ կը խօսի փոքրիկները մարզական մթնոլորտի մէջ պահելու կարեւորութեան մասին: «Նպատակը միայն բաժակներ շահիլ չէ, այլ՝ կայ աւելի կարեւորը՝ մարզանքի նկատմամբ հետաքրքրութիւն ստեղծել փոքրիկներուն մօտ», կ'ըսէ ան:

ՓԱՏԱՆԻՆԵՐ

Մարզիչ Հրայր Տիշչէքէնեան ստանձնած է 88-89 տարիքային դասակարգի տղոց, ինչպէս նաեւ 4րդ դասակարգի մէջ հանդէս եկող մասնաճիւղի հաւաքականի կազմին մարզումը:

Այս խումբերը եւս կը հետեւին լուրջ փորձերու: «8 Նոյեմբերին պիտի սկսի Լեռնալիբանանի ախոյեանութիւնը», կ'ըսէ մարզիչը, նշելով որ նախապատրաստութիւններու ծիրէն ներս 4րդ դասակարգէն ելոյթ ունեցող տղոց խումբը արդէն ունեցած է շարք մը բարեկամական մրցումներ յաղթանակներ արձանագրելով Հայկազեան համալսարանի եւ Համտունի (Դ. դասակարգ) խումբերուն դէմ եւ պարտուելով Սէն Ժորժ Զալքայի խումբին դէմ: Մարզիչը կը նշէ նաեւ, որ համեմատաբար նախորդ երեք տարիներուն, խումբը շատ աւելի փորձառու է եւ 3րդ դասա-

կարգ բարձրանալու յոյսերը շօշափելի են:

Տղոց 1984-85 եւ 1986-87 տարիքային դասակարգերու մարզումները ստանձնած է Ներսէս Էմմիեան: Ան կը նշէ, թէ տարիքային այս դասակարգերուն պատկանողներէն ոմանք արդէն ելոյթ կ'ունենան նաեւ Դ. դասակարգի խումբին հետ: Ներսէս Էմմիեան կը շեշտէ այս տարիքի պատանիներուն ձեռք ձգած փորձառութեան կարեւորութիւնը. «Այս տարիքի տղաքը ձեռք կը ձգեն շատ աւելի փորձառութիւն եւ կը հետեւին սերտուած փորձերու: Անցումային այս հանգրուանը յոյժ կարեւոր է պասքէթուիստի կազմաւորման մէջ», կը բացատրէ մարզիչը: Աղջրկանց 84-85, 86-87 եւ 88-89 տարիքային դասակարգերու մարզիչն է ռուս Սերգէյ Զիփուրքին, որ նաեւ կը մարզէ Ա. դասակարգի աղջկանց կազմը: Օգնական մարզիչն է Բաֆֆի Գասապեան: Ան կը բացատրէ, թէ «Ա. դասակարգի կազմին մէջ ընդգրկուած են 5 մարզիկներ, որոնք տարիքային դասակարգի մէջ եւս փորձերու կը հետեւին»: Բաֆֆի Գասապեան կը շեշտէ աղջկանց տարիքային այս խմբակներուն կարեւորութիւնը՝ Ա. դասակարգի աղջկանց կազմին շարքերը ամրապնդելու առումով:



Մասնաճիւղի վարչականներն ու մարզիչները 2որեքշաբթի օրերը կ'ունենան մարզիչներու միջեւ համակարգումի ժողով: Բոլոր այն ծնողները, որոնք կը փափաքին իրենց զաւակները արձանագրել Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի պասքէթուի դպրոց, կրնան ներկայանալ փորձի օրերուն, կամ 2որեքշաբթի օրերը երեկոյեան 8:00-9:30 կապուիլ վարչութեան հետ:

Հ.Մ.Ը.Մ. ԱՆԹԻԼԻԱՍԻ ՆՈՒԱՃՈՒՄՆԵՐԸ՝ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳԵՐՈՒ ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Եղամակ	Տարիքային դասակարգ	Պարտ	Մարզիչ	Օգնական մարզիչ
1998 - 1999	15 - 16 տարեկան աղջիկներ	3րդ	Միրէյ Աճէմեան	Միրէյ Աճէմեան
1998 - 1999	17 - 18 տարեկան աղջիկներ	2րդ	Վարդուկ Մարգարեան	Ռաֆֆի Գասապեան
1999 - 2000	11 - 12 տարեկան աղջիկներ	Ախոյեան	Վարդուկ Մարգարեան	Ալին Լոշխանեան
1999 - 2000	17 - 18 տարեկան աղջիկներ	2րդ	Յովսէփ Լոշխանեան	Ռաֆֆի Գասապեան
2000 - 2001	9 - 10 տարեկան աղջիկներ	2րդ	Վարդուկ Մարգարեան	Ռաֆֆի Գասապեան
2001 - 2002	15 - 16 տարեկան աղջիկներ	3րդ	Ռաֆֆի Գասապեան	Յակոբ Ծերանեան
2001 - 2002	17 - 18 տարեկան աղջիկներ	3րդ	Ռաֆֆի Գասապեան	Յակոբ Ծերանեան
2001 - 2002	19 - 20 տարեկան աղջիկներ	2րդ	Ռաֆֆի Գասապեան	Յակոբ Ծերանեան
2002 - 2003	12 - 14 տարեկան աղջիկներ	2րդ	Ֆուատ Մուրատեան	Հրայր Տիշչէքէնեան
2002 - 2003	15 - 16 տարեկան աղջիկներ	2րդ	Ռաֆֆի Գասապեան	Յակոբ Ծերանեան

ԼՈՒՐԵՐ ՀԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԱՇԽԱՐՀԷՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՂԻՄԱԿԻԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՆ ԿԸ ՊԱՐԳԵՒԱՏՐԷ ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆԸ

Միջազգային Ողիմպիական կոմիտեն Լոզանի մէջ իր գումարած ժողովին որոշեց ոսկիէ շքանշանով պարգևատրել Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեանը:

Ողիմպիականի այդ տիտղոսին, որ կը նկատուի ամենէն բարձրը, ցարդ միայն քանի մը երկիրներու նախագահներ արժանացած են:

Իր խօսքին մէջ Ողիմպիականի նախագահ Ժաք Ռոկ շնորհատրեց

նախագահ Քոչարեանը՝ մարզական աշխարհին մէջ իր մատուցած մեծ ծառայութիւններուն համար:

ՀԱՅԱՍՏԱՆ-ՅՈՒՆԱՍՏԱՆ ՄՐՅՈՒՄԻՆ ԳԾՈՎ ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.Ի ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.ն յայտարարեց, թէ անցեալ Սեպտեմբեր 6ին Երեւանի մէջ տեղի ունեցած Հայաստան - Յունաստան մրցումին (Եւրօ-2004ի գտում) գծով Հայաստանի ֆութպոլի ֆետերասիոնին բողոքը լսելէ եւ այդ ուղղութեամբ մանրամասն քննութիւններ կատարելէ ետք ոչ մէկ փաստ գտած է, թէ Յունաստանի ֆութպոլի ֆետերասիոնը կամ անոր նախագահը փորձած են մրցումը «գնել» Հայաստանի ֆութպոլի ազգային խումբին կարգ մը մարզիկներէն:

«Ներկայ կացութեամբ, ամէն ինչ կ'ընթանայ բնական, որովհետեւ ոչ մէկ փաստացի տուեալ գոյութիւն ունի, որ կրնայ բացայայտել, թէ Յունաստանի ֆութպոլի ֆետերասիոնը օրինազանցութիւն կատարած է եւ կամ խախտած ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.ի օրէնքները», կը յայտնէ ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.ի պաշտօնական մէկ յայտարարութիւնը:

ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.ն եզրափակեց ըսելով, որ այս հարցին շուրջ իր կատարած քննութիւնները պիտի աւարտին Հոկտեմբերին վերջը:

Նշենք, թէ այս մրցումին արդիւնքը վերջ գտաւ 1-0, ի նպաստ՝ Յունաստանի:

«ԵՈՒՐՕ - 2004»

ՀԱՅԱՍՏԱՆ - ՍՊԱՆԻԱ՝ 0-4

Հայաստանի ֆութպոլի ազգային հաւաքականը «Եւրօ 2004»ի գտումի մրցաշարքի վերջին հանգրուանին 0-4 արդիւնքով պարտութիւն մը կրեց Սպանիոյ հաւաքականէն: Առաջին կիսախաղին 7րդ վայրկեանին Խուան Վալերոն բացաւ մրցումին հաշիւը:

ՃԱՏՐԱԿԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՂԶԿԱՆՑ ԿԱԶՄԸ ԵՒՐՈՊԱՅԻ ԱԽՈՅԵԱՆ

Հայաստանի ճատրակի աղջկանց հաւաքականը Եւրոպայի ճատրակի խմբային ախոյեանութեան մրցաշարքին մեծ իրագործում մը կատարեց եւ առանց պարտութիւն մը կրելու Փլովտիի մէջ հանդիսացաւ Եւրոպայի ախոյեան:

Հայաստանի աղջիկները, ապահովելով 13,5 կէտ, գերազանցեցին Հունգարիան (որ իր կարգին նոյնքան կէտ շահեցաւ) եւ հանդիսացան ախոյեան, Հայաստանի աղջկանց ճատրակի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով:

Էլինա Դանիէլեան, Լիլիթ Մկրտչեան եւ Նելլի Աղիմեան Փլովտիի մէջ իրենց կատարած այդ իրագործումով, փաստեցին, որ Հայաստանի աղջիկները բաւական մեծ յառաջդիմութիւն արձանագրած են այդ մարզին մէջ:

Հայաստանի ճատրակի ֆետերասիոնը յայտնեց, որ ախոյեան հանդիսացած վարպետները պիտի ստանան 12 հազար տոլար արժողութեամբ դրամական պարգև:

● ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ

31 Հոկտեմբերին Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Անդրանիկ Մարգարեանի այցելեց ճատրակի Եւրոպայի աղջկանց ախոյեան կազմը, ընկերակցութեամբ մարզիչ Արսէն Եղիազարեանի եւ ճատրակի ակադեմիայի տնօրէն Սմբատ Լպուտեանի:

Անդրադառնալով Եւրոպայի ախոյեանութեան Հայաստանի աղջկանց հաւաքականի արձանագրած փայլուն արդիւնքին, Ա. Մարգարեան այդ մէկը բնութագրեց իբրեւ հերոսութիւն, տրուած ըլլալով, որ յաճախ մէկ անձի շնորհիւ է, որ ամբողջ աշխարհը կը ճանչնայ Հայաստանը, իբրեւ օրինակ տալով աշխարհի ախոյեան Տիգրան Պետրոսեանի անունը:

Վարչապետին համաձայն, իրենց յաղթանակով Հայաստանի ճատրակի վարպետութիւնները ապացուցեցին, թէ Հայաստանի մէջ միայն արական սեռի պատկանող ճատրակի վարպետները չեն, որոնք կրնան միջազգային մակարդակի նուաճումներ արձանագրել:

Մօտէն հետաքրքրուելով անոնց յառաջիկայ ծրագիրներուն մասին, վարչապետը խոստացաւ պետական աջակցութիւն ցուցաբերել ճատրակին:

Ան ծաղկեփունջեր եւ ձեռքի համակարգիչներ նուիրեց ախոյեանութիւններուն:



Էլինա Դանիէլեան



Լիլիթ Մկրտչեան



Նելլի Աղիմեան



ՄԻՔԱՅԷԼ ՇՈՒՄԱԽԵՐԻ ՀԱՆԴԻՍԱՑՄԱՒ ՖՈՐՄՈՒԼԱ 1Ի ԲՈԼՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ՄԵԾԱԳՈՅՆ ՎԱՐՈՐԴԸ

Ֆորմուլա 1ի 2003ի աշխարհի ախոյեանութեան 16րդ եւ վերջին կրան փրին, որ տեղի ունեցաւ Սուգուրայի մէջ (Ճափոն)՝ Ֆեռարիի գերմանացի վարորդ Միքայէլ Շումախերի համար եղաւ պատմական օր մը, նկատի ունենալով, որ ան վեցերորդ անգամ ըլլալով հանդիսացաւ աշխարհի ախոյեան, բոլոր ժամանակներու մրցանիշները կոտրելով: Ան միանգամընդմիջտ ապացուցեց, որ կը հանդիսանայ ոչ միայն իր ժամանակաշրջանին, այլեւ բոլոր ժամանակներու մեծագոյն վարորդը: Ան անցեալ տարի հաւասարած էր արժանթինցի Խուան Մանուէլ Ֆանճիոյի հաստատած մրցանիշին, որ 1951ին, 1954ին, 1955ին, 1956ին եւ 1957ին հանդիսացած էր աշխարհի ախոյեան: Շումի իր վեց տիտղոսները շահած է 1994ին, 1995ին, 2000ին, 2001ին, 2002ին եւ 2003ին: Շումիի եւ Ֆանճիոյի ետին երրորդ դիրքին վրայ կը գտնուի ֆրանսացի Ալէն Փրոսթ, որ չորս անգամ՝ 1985ին, 1986ին, 1989ին եւ 1993ին հանդիսացած է աշխարհի ախոյեան:



Ստորեւ՝ վարորդներուն վերջնական դասաւորումը. փակագիծի մէջ նշուած են երկիրն ու կէտերը)

- 1.- Միքայէլ Շումախեր (Գերմանիա, 93 կէտ)
- 2.- Քիմի Ռայքոնըն (Ֆինլանտա, 91)
- 3.- Խուան Փապիօ Մոնթոյա (Քոլումպիա, 82)
- 4.- Ռուպէն Պարիքելլօ (Պրագիլ, 65)
- 5.- Ռալֆ Շումախեր (Գերմանիա, 58)
- 6.- Ֆեռնանտօ Ալոնսօ (Սպանիա, 55)
- 7.- Տէյվիտ Բուլթարտ (Բրիտանիա, 51)
- 8.- Եաննօ Թրոյի (Իտալիա, 33)
- 9.- Ենսըն Պաթըն (Բրիտանիա, 17)

- | | | |
|---|--------------|-----|
| 10.- Մարք Ուեպըր (Աւստրալիա, 17) | | 4ԷՏ |
| 11.- Հայնց-Հերլտ Ֆրենցըն (Գերմանիա, 13) | 1.- Ֆեռարի | 158 |
| 12.- Ժիանքարլօ Ֆիզիքելլա (Իտալիա, 12) | 2.- Ուիլիըմս | 144 |
| 13.- Քրիսթիանօ Տա Մաթթա (Պրագիլ, 10) | 3.- Մաքլարըն | 142 |
| 14.- Նիք Հիտֆելտ (Գերմանիա, 6) | 4.- Ռընօ | 88 |
| 15.- Օլիվիէ Փանիս (Ֆրանսա, 6) | 5.- ՊԱՐ | 26 |
| 16.- Ժաք Վիլընէօվ (Քանատա, 6) | 6.- Սաուպըր | 19 |
| 17.- Մարք Խենէ (Սպանիա, 4) | 7.- Ժակուար | 18 |
| 18.- Թաքումա Սաթօ (Ճափոն, 3) | 8.- Թոյոթա | 16 |
| 19.- Ռալֆ Ֆըրմըն (Բրիտանիա, 1) | 9.- Ժորտըն | 13 |
| 20.- Ժասթին Ուիլըն (Բրիտանիա, 1) | 10.- Մինարտի | 0 |

Ստորեւ՝ խումբներուն վերջնական դասաւորումը.



ԱՐԱ ՅԱԿՈՐԲԵԱՆ ՀԱՍՏԱՏԵՑ ՆՈՐ ՄՐՅԱՆԻՇ ՄԸ

Բանանց Երեւանի մարզիկ՝ Արա Յակոբեան, Հայաստանի ֆութպոլի ախոյեանութեան մրցումներուն եղանակի իր 40րդ կոլը նշանակելով, երկրին ֆութպոլի պատմութեան մէջ նոր մրցանիշ մը հաստատեց: Ան այսպիսով կոտրեց Փիւնիկ Երեւանի նախկին մարզիկ՝ Արսէն Աւետիսեանի հաստատած մրցանիշը, որ նշանակած էր 39 կոլ:

Իր կատարած այդ իրագործումէն ետք, Արա Յակոբեան փաստեց, որ կը մնայ Հայաստանի ֆութպոլի ախոյեանութեան մրցումներուն լաւագոյն ոմբարկուն:

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԲԱԺԱԿ»

28 Հոկտեմբերին, Երեւանի Վազգէն Սարգսեանի անուան հանրապետական մարզադաշտին վրայ տեղի ունեցած աւարտական մրցում-

նէրով իր լրումին հասաւ 2002-2003 ուսումնական տարուան «Ազգային Ժողովի բաժակ»ը, որուն իրենց մասնակցութիւնը կը բերէին Հայաստանի տարբեր շրջաններէն 1-5րդ դասարաններու աւելի քան 200,000 մարզիկ - աշակերտներ, որոնց 240ը հասած էր աւարտական փուլ:

Աթլետիկ միջամտութիւնները ընդգրկող այս մրցումները մեծ յաջողութեամբ պսակուեցան:

Նշենք, որ 2000-2001 տարեշրջանին այս մրցաշարքին իրենց մասնակցութիւնը բերած էին 120 հազար աշակերտներ, իսկ 2001-2002 տարեշրջանին՝ 160 հազար աշակերտներ:

ԱՐՅԱՆԻ ՄԷՋ ՊԻՏԻ ԲԱՅՈՒԻ ԴԱՏՐԱԿԻ ԱՎԱԳԵՄԻԱՅԻ ՄԱՆԱԳԻՒ

23 Հոկտեմբերին, Ստեփանակերտի մէջ քննարկուեցաւ ճատրակի ակադեմիայի Արցախի մասնաճիւղ մը յառաջացնելու հարցը: Այս ծիրէն ներս, վարչապետ Անուշաւան Դանիէլեան հանդիպում մը ունեցաւ ակադեմիայի հիմնադիր - նախագահ Սմբատ Լպոտեանի եւ ակադեմիայի խորհուրդի անդամ Արամ Հաճեանի հետ: Համաձայնութիւն գոյացած է Ստեփանակերտի մէջ ստեղծել ճատրակի ակադեմիայի կեդրոն մը, ուր բարձրորակ մարզիչի մը ցուցումներուն պիտի հետեւին արցախցի շնորհալի փոքրիկներ: Կը նախատեսուի նաեւ 2004ին Արցախի մէջ կազմակերպել միջազգային մրցաշարք, որուն պիտի հրաւիրուին աւելի քան 10 մեծ վարպետներ:

ԹԵՆԻՍ

ՆԱԼ ՊԱՆՏԵԱՆ ԱՊԱՀՈՎԵՑ «ՄԱՍԹԵՐՐՉ» ԲԱԺԱԿԻ ԻՐ ՏՈՄՍԸ

Արժանթինահայ Դաիթ Նալպանտեան հանդիսացաւ Տրոյ եւ վերջին թեմիսմէնը, որ իր տեղը կ'ապահովէր 2003 եղանակը եզրափակող «Մասթերրոյ» բաժակի մրցաշարքին: Նոյեմբեր 8 - 16 տեղի ունենալիք այս մրցաշարքը կը նկատուի թեմիսի աշխարհի ախոյեանութիւնը, եւ այնտեղ կը մրցին տարեշրջանին լաւագոյն արդիւնքները արձանագրած 8 մարզիկներ:

Դաիթ Նալպանտեան առաջին անգամ ըլլալով իր տեղը կ'ապահովէ թեմիսմէններու այս ընտրանիին մէջ: Ախոյեանութեան իրենց առաջին մասնակցութիւնը կը բերեն նաեւ Քորիա, Ռոտիք եւ Շուիլըր:

«Շատ ուրախ եմ «Մասթերրոյ» բաժակի մասնակցութեան իրաւունքին տիրանալուս համար: Անկասկած, որ այս մէկը եղանակի մեծագոյն նպատակներէս մէկն էր եւ շատ ուրախ եմ, որ հասալ նպատակիս: Կարծեմ այս երկու շաբթուան հանգիստէն ետք պատրաստ պիտի ըլլամ մրցաշարքին: Պիտի փորձեմ լաւագոյնս ընել: Յուսամ այս միակ անգամը չ'ըլլար, որ կը մասնակցիմ այս մրցաշարքին», ըսաւ Նալպանտեան:

Հակառակ տարեշրջանի ընթացքին յաճախ վիրաւոր ըլլալուն, Նալպանտեան ընթացքի մէջ է տարեշրջանը ւարտելու դասաւորման առաջին տասնեակին մէջ: Թէեւ Նալպանտեան տարուան ընթացքին ոչ մէկ տիտղոս շահեցաւ, սակայն հասաւ 2 մրցաշարքի ւարտականին (Մոնրէալ եւ Պալ) եւ յաջող մրցումներ ունեցաւ Կրան շլէմ (13 յաղթանակ - 4 պարտութիւն) եւ «Մասթերրոյ» մրցաշարքերու ընթացքին (14 յաղթանակ, 7 պարտութիւն): Ան հասաւ Աւստրալիոյ բաց մրցաշարքի քառորդ



ւարտականին (տեղի տալով Շուիլըրի դէմ) եւ Ամերիկայի բաց մրցաշարքի կիսաւարտականին, որ պարտուեցաւ Ռոտիքի դէմ:

Նալպանտեանի կողքին «Մասթերրոյ» ախոյեանութեան մասնակցելու իրաւունք ստացան Ռոտիք, Ֆերրերո, Ֆետերեր, Ակասի, Քորիա, Շուիլըր եւ Մոյա:

ԱԼԵՆ ՊՕՂՈՍԵԱՆ ԿԸ ԼՔԷ ՖՈՒԹՊՈԼԸ

1998ի Մոնտիալին, Ֆրանսայի ֆութպոլի ազգային խումբին հետ աշխարհի ախոյեան հանդիսացած Ալէն Պօղոսեան որոշեց լքել ֆութպոլիստի իր ասպարէզը:

Ֆրանսայի ֆութպոլի ազգային խումբին հետ 26 միջազգային մրցում կատարած եւ 2 կոլ նշանակած 32 տարեկան Պօղոսեան ըսաւ.

«Որոշեցի ֆութպոլը լքել, որովհետեւ խաղալու ախորժակս «մարեցաւ»: Այսուհանդերձ չեմ ուզեր ֆութպոլի աշխարհէն բոլորովին հեռանալ եւ ապագային կ'ուզեմ այլ պաշտօն մը ստանձնել»:

Վերջին անգամ Ֆրանսայի շապիկը Մայիս 2002ին կրած Պօղոսեանի վերջին ակումբը հանդիսացաւ Էսփանիոլը (Սպանիա), որուն հետ անոր պայմանագրութիւնը ւարտեցաւ անցեալ Օգոստոսին: Վիրաւոր ըլլալով, ան իր ակումբին հետ միայն հինգ անգամ դաշտ ներկայացաւ:

Էսփանիոլէն բացի ան մաս կազմած է Մարսէլի, Նափոլիի, Սամտորիայի եւ Փարմայի: Վերջինին հետ ան շահեցաւ Իտալիոյ բաժակը եւ Նու. Է. Էֆ. Ա.ի մրցաշարքը (1999):



ԹԵՆԻՍ. Ս. ՓԵՐԵՐՍՊՈՐԿԻ ՄՐՅԱՇԱՐԿԸ

ՄԱՐԳՍԵԱՆ ԱՄԱՐՏԱԿԱՆԻՆ ՊԱՐՏՈՒԵՅԱՒ ՔՈՒԷՐԹԵՆԷՆ



Ս. Փերերսպորկի (Ռուսիա) մէջ տեղի ունեցած տղոց մրցաշարքի ւարտականին, Հայաստանէն՝ Սարգիս Սարգսեան դժուարութեամբ տեղի տուաւ, երբ 6-4 եւ 6-3 արդիւնքով պարտուեցաւ մրցաշարքին թի 3րդ դասուած մարզիկէն՝ պրագիցի Կուսթաւո Քուէրթէնէն:

30 տարեկան Սարգսեան, որ կիսաւարտականին 6-3 եւ 6-3 արդիւնքով պարտութեան մատնեց մրցաշարքին թի 1 դասուած մարզիկը, գերմանացի Ռայնըր Շուիլըրը, ձախողեցաւ իր ասպարէզի երկրորդ տիտղոսին տիրանալ:

Նշենք, թէ Սարգսեան իր առաջին եւ միակ տիտղոսը շահած է 1997ին, Նիւփորթի մէջ: